ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(1918 թ. սեպտեմբեր – հոկտեմբեր)

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Բաթումի պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում էր 12 հազար քառակուսի կիլոմետր, «բնակչության թիվը դաղթականներով միասին՝ մոտ մեկ միլիոն»[1]: 1918 թ. հոկտեմբերի 11-ին Հայաստանի Խորհրդի հերթական նիստում գաղթականներին օգնելու նախահաշվի քննարկման ժամանակ հայտարարված պաշտոնական տվյալների համաձայն, հանրապետությունում գաղթականների ընդհանուր թվաքանակը կազմում էր 330 000 մարդ, որից արևելահայ գաղթականները՝ 180 000, իսկ արևմտահայերը՝ 150 000[2]: «Հայաստանը, ավելի շուտ, գաղթականական կայան էր»,– իրավացիորեն նշում է Ս. Վրացյանը[3]: Բնական է, որ հանրապետությունում տիրող ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում ազգաբնակչության մեջ առավել անպաշտպան և խոցելի մասն էր կազմում «անտուն և անսնունդ» գաղթականությունը:

Հայաստանի Խորհրդին ներկայացված ծրագիրը բավականին չափավոր և իրատեսական էր: Անվանելով տյն «պետության դոյությունը ապահովեցնող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիր», վարչապետը նշում էր, «որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրանց ամբողջությամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի շարք կարևոր և արդեն հասունացած խնդիրներ»[4]: Իրատեսորեն բնութագրելով հանրապետությունում ստեղծված վիճակը որպես «կատաստրոֆային», վարչապետ Հ. Քաջազնունին ներկայացնում է իր կառավարության առջև ծառացած հիմնական խնդիրները. «Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանական վիճակից ու ստեղծել պետական շինարարության համար անհրաժեշտ պայմաններ»[5]: Այդ հիմնական խնդիրները լուծելու համար ներքին գործերի բնագավառում կառավարությունը մի քանի այլ անհետաձգելի խնդիրների հետ մեկտեղ նախատեսում էր «տնօրինել գաղթա-

---

[1] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն. Երևան, 1993, էջ 164: Ա. Խատիսյանը նշում է «հազիվ 9000 քառ. կիլոմետր» տարածք (տե՛ս Ա. Խ ա տ ի ս յ ա ն. Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը. Բեյրութ, 1968, էջ 86):

[2] Տե՛ս «Կառավարության լրարեր», 15.X.1918:

[3] Ս. Վ ր ա ց յ ա ն. Նշվ. աշխ., էջ 199:

[4] Նույն տեղում, տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 58–59:

[5] «Զանգ», 7.VIII.1918. տե՛ս նաև Հայաստանի Հանրապետությունը 1918–1920, Երևան, 2000, էջ 57:

կանների և վախստականների վիճակը՝ մասամբ վերադարձնելով իրանց նախկին տեղերը, մասամբ տեղավորելով նոր վայրերում»[6]:

Հոդվածի նպատակն է ներկայացնել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում վախստականների նկատմամբ պետական քաղաքականության օրենսդրական ձևակերպման դործընթացը, ընդունված օրենսդրական ակտերի վերլուծությունը:

Փախստականների նկատմամբ քաղաքականության վերը նշված ծրագրային դրույթն իր օրենսդրական ձևակերպումն է ստացել Հայաստանի Խորհրդի կողմից 1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ընդունված մի քանի օրենքներով: Սակայն անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Խորհրդում այդ օրենսդրական ակտերի ընդունումն այնքան էլ հարթ չի ընթացել: Մինչև սեպտեմբերի 24-ը Հայաստանի Խորհրդում քննարկվում էր գաղթականների խնամատարության միասնական օրենքի նախագիծ: Անց էր կացվել այդ օրենքի նախագծի երկու ընթերցում: Նշված օրը Հայաստանի Խորհրդում տեղի էր ունեցել «գաղթականական խնամատարության օրենսգծի վերջնական խմբագրությամբ» երրորդ ընթերցումը[7]:

Նիստում Հայաստանի Խորհրդի գաղթականական հանձնաժողովի կողմից օրենքի նախագիծը ներկայացնում է պատգամավոր Ռ. Տեր-Մինասյանը[8]: Այնուհետև օրենքի նախագծի երկու հոդվածների նկատմամբ դաշնակցական ֆրակցիայի կողմից առարկություն է արվում: Իսկ ֆինանսական հանձնաժողովի կողմից պատգամավոր Ս. Տեր-Մարտիրոսյանը ներկայացնում է այն կարծիքը, թե «մոնոպոլիայի միջոցով հավաքված բամբակը 85 800 փութ պետք է հատկացնել ջուլհականոցին և որ այդ գործարանի կառավարչի տրամադրության տակ պետք է դնել 5 միլիոն ռուբլի»: Դրանից հետո ելույթ է ունենում ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանը և հայտարարում, «որ ինքը հնարավորություն չի ունեցել սկզբից ծանոթանալու այդ գործին, բայց լսած զեկուցման վրա հիմնվելով, գտնում է, որ այդ օրենսգիծը պետական բյուջեի ձև չի կրում» և այդ առումով անընդունելի է: Պատգամավոր Ս. Տիգրանյանն առաջարկում է օրենքի նախագիծը հանձնել ֆինանսական հանձնաժողովին, «որպեսզի մինիստրի հետ միասին խառը ժողովում քննելուց հետո նոր միայն խորհրդին ներկայացվի»:

Իր հերթին զեկուցողը «հայտարարում է, որ երբ օրինագծի դեմ առարկում են, պետք է նոր օրինագիծ առաջարկել: Այնուհետև անցնելով խնդրի շտապողականությանը, շեշտում է, որ գաղթականությանը այսպես թե այնպես պետք է մի որևէ կերպ նպաստ տալ. դրամական նպաստ տալ մոտավորապես 20 000 կանանց ավելի հեշտ չէ, քան նրանց գործ գտնել: Ապա ավելացնում է, որ սա արդեն օրինագծի 3-րդ ընթերցումն է և որ ջուլհականոցին վերաբերող հոդվածը օրինագծի մի մասն է կազմում միայն,

---

[6] Նույն տեղում, էջ 58:

[7] Տե՛ս «Կառավարության լրաբեր», 4.X.1918:

[8] Հայաստանի Խորհրդում ի թիվս 15 մշտական հանձնաժողովների ստեղծվել էր նաև գաղթականական հանձնաժողով, որի կազմի մեջ էին նաև Հայ հեղափոխական գաշնակցության կողմից երաշխավորված Ռ. Տեր-Մինասյանը, Հ. Տեր-Հակոբյանը և բժիշկ Ա. Բաղալյանը: Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. Պ–198, ց. 1, գ. 15, թ. 15–16:

ուստի և առարկությունները ավելորդ են»: Սակայն ֆինանսների նախարարը նորից «հայտարարում է, որ իրեն տարօրինակ է թվում և որ ոչ մի երկրում ընդունված ձև չէ, որ պետական որևէ հանձնաժողով պահանջե 6 միլիոն բյուջե և ֆինանսների մինիստրը տեղյակ չլինի»: Վերջիվերջո քվեարկությամբ ընդունվում է հետևյալ առաջարկությունը. «Վերադարձնել օրինագիծը ֆինանսական հանձնաժողովին վերաքննելու համար»:

Արդյունքում միասնական օրենքի նախագիծը մասնատվեց և սեպտեմբերի 28-ին Հայաստանի Խորհուրդն առանց նախահաշվի հաստատեց «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» օրենքը, որն, ըստ էության, գաղթականական պետական քաղաքականության սկզբունքների հռչակագիրն էր: Ավելի ուշ՝ հոկտեմբերի 8-ին առանձին նախահաշվով ընդունվեց «Կարիքավոր գաղթականների համար ջուլհականոցներ բանալու մասին» օրենքը: Միայն 12 օր անց, հոկտեմբերի 11-ին, ձմեռվա նախաշեմին, «Գաղթական որբերի խնամատարության և դաստիարակչության մասին» օրենքի հետ Հայաստանի Խորհուրդը հաստատեց նաև «Գաղթականներին օգնելու պահանջված ծախքերի 1918 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1919 թ. հունվարի 1-ը նախահաշիվը»:

Վերը թվարկված օրենքներից առաջինը և հիմնարարը Հայաստանի Խորհրդի կողմից 1918 թ. սեպտեմբերի 28-ին հաստատված «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» օրենքն էր[9]: Օրենքի առաջին հոդվածը հռչակում է՝ «Կարիք ունեցող գաղթականներին օգնություն է տրվում աշխատանքի միջոցով» հիմնարար դրույթը: Նույն հոդվածի առաջին ծանոթությունում ասվում է. «Գաղթականին աշխատանք տալու անհնարինության կամ նրա՝ աշխատանքի անընդունակության դեպքում նա ստանում է նպաստ», իսկ երկրորդում՝ «Աշխատանքից հրաժարվող գաղթականը զրկվում է պետական նպաստ ստանալու իրավունքից»: Այնուհետև օրենքի երկրորդ հոդվածով ամրագրվում է, որ «Հայաստանի սահմաններում գտնված պետական ազատ», «նաև լքված և անտեր» հողերը «տրվում են գաղթականներին՝ մշակելու»: Օրենքի երրորդ հոդվածի համաձայն՝ «Գաղթական յուրաքանչյուր ընտանիքին հողը տրվում է աշխատավոր ձեռքերի թվի համեմատ»: Հաջորդ հոդվածով նախատեսվում է գաղթականին տալ «մանրամասն ցուցակագրությամբ» համապատասխան գույք, որը «փչացնելու համար գաղթականը ենթարկվում է օրինական պատասխանատվության»: Եթե գաղթականը մեկ ամսվա ընթացքում չի գնում նշանակված վայրը, ապա, ինչպես նշվում է օրենքի հինգերորդ հոդվածում՝ «հողից օգտվելու իրավունք ստացած գաղթականը զրկվում է այդ իրավունքից»: Վերջին՝ վեցերորդ հոդվածը սահմանում է, որ գաղթականի ինքնությունը որոշվում է «ընդհանուր հիմունքներով»:

«Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» հիմնարար օրենքի օրգանական շարունակությունն է կազմում 1918 թ. հոկտեմբերի 8-ին Հայաստանի Խորհրդի կողմից ընդունված «Կարիքավոր գաղթականների համար ջուլհականոցներ բանալու մասին» օրենքը[10]: Օրենքի

---

[9] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), Երևան, 1998, էջ 6:

[10] Նույն տեղում, էջ 9–10:

առաջին հոդվածով որոշվում է «Կարիքավոր գաղթականների, առավելապես կանանց համար, բանալ պետական ջուլհականոցներ»: «Այդ նպատակով և համաձայն սրանց հետ հաստատված նախահաշվի,– ասվում է օրենքի երկրորդ հոդվածում,– հատկացնել՝ 6 691 200 ռ. և մոնոպոլիզացիայի ենթարկված բամբակից 85 700 փութ»: Հաստատված նախահաշվի համաձայն նախատեսվում էր աշխատատեղեր ստեղծել 37 690 գաղթականի՝ հիմնականում կանանց համար, այդ թվում՝ 1500 ջուլհակի, 20 000 մանողի, 800 գզրարի, 15 000 մասրաշինողի, 150 թելակապողի, 30-ական ասպ շինողի, հյուսնի և չավողի, 60 մաքրողի, 30 վարպետի և 30 օգնականի, 30 շուհ անողի:

«Գաղթական որբերի խնամատարության և դաստիարակչության մասին» օրենքի[11] առաջին հոդվածով հռչակվում էր, որ «Հայաստանի սահմաններում բոլոր գաղթական որբերի խնամատարության ու դաստիարակչության գործը պետությունը վերցնում է իր վրա, որի անմիջական վարումը հանձնվում է հանրային խնամատարության մինիստրին»: Հաջորդ հոդվածում նշվում էր, որ որբերին խնամելու և դաստիարակելու համար պետք է հիմնվեն անհրաժեշտ քանակի որբանոցներ: Միաժամանակ օրենքով ամրագրվում էր յուրաքանչյուր ինքնավարության մարմնի, հասարակական կազմակերպության և մասնավոր անհատի իրավունքը՝ բացելու ու պահելու որբանոց, սակայն պետության հսկողության ներքո:

«Գաղթականներին օգնելու պահանջված ծախքերի 1918 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1919 թ. հունվարի 1-ը նախահաշվի»[12] համաձայն նախատեսվում էր 10 հազար որբերի համար ամսեկան 4 500 000 ռուբլու և 5 հազար նոր որբերի համար միանվագ հավելյալ 3 միլիոն ռուբլու ծախսեր: Նախահաշվով նաև նախատեսվում էր նաև 25 000 «անճար և աննեցուկ գաղթականների օգնություն», «օրական ամեն մեկին հաշվելով 1 ֆ. կարտոֆիլ» և «դրամական նպաստ՝ օրական 60 կ. մեկ շնչին»: Նույնով գաղթականներին հատկացվում էր 2 180 000 ռուբլի՝ ավերված գյուղերում 1000 բնակարան վերաշինելու, 9 հազար բնակարանի գերաններ պատրաստելու և 500 գաղթական ընտանիքի 1 փութ ցորեն տրամադրելու համար (մեկ փութը 60 ռուբլի հաշվարկով):

Հայաստանի Խորհրդում վերը նշված օրենքի նախագծի և նախահաշվի քննարկումը նույնպես հարթ չանցավ: Հայաստանի Խորհրդի ֆինանսական հանձնաժողովի կողմից զեկուցողը «հայտնում է, որ ֆին[անսական] կոմիսիան նկատի ունենալով, որ ձմեռը մոտենում է և անհրաժեշտ է շտապեցնել գաղթ[ականների համար] բնակարան ճարելու և որբերը պատսպարելու անհետաձգելի գործերը, առաջարկում է նախահաշիվը շտապողական ճանաչել»[13]: Առաջարկը Հայաստանի Խորհրդի կողմից ընդունվեց: Այնուհետև զեկուցողը՝ ներկայացնելով վերջին մարգահամարի համաձայն արևելահայ գաղթականների՝ 180 000 մարդ, արևմտահայերի՝ 150 000 մարդ և նրանց ընդհանուր՝ 330 000 մարդ թվաքանակները, բավականին

[11] Նույն տեղում, էջ 11:
[12] Նույն տեղում, էջ 11–12:
[13] «Կառավարության լրաբեր», 15.X.1918:

հետաքրքիր բացատրություններ է տալիս նախահաշվի կազմման մասին. «Այս թիվը բաժանված է երեք հատվածի.

ա. մոտ 1/3-ը ունի սեփական միջոցներ և առանց օգնության կարող է ապրել,

բ. 62 500 հոգի կարող են ապրել սեփական աշխատանքով,

գ. մնացած մասը առանց պետական օգնության չի կարող յուր գոյությունը պահպանել և ունի հետևյալ պատկերը.

1. որբեր՝ 10 000,

2. անճարներ՝ 25 000,

3. անկյալներ՝ 1 000,

4. մասնավոր օգնության կարիք ունեցողներ՝ 26 000 հոգի:

Սրանց օգնության նախահաշիվը կազմված է հետևյալ ձևով.

1. Որբանոցներ. նախնական կահավորման, անկողնի, մահճակալի ևն-ի համար յուրաքանչյուր որբին՝ 234 ռ.: Այս թվի վրա եթե ավելացնենք նաև որբանոցների կահկարասին, կունենանք յուրաքանչյուր որբին՝ մոտ 400 ռ.: Հագուստ աղջիկ որբին՝ 123 ռ., տղային՝ 118 ռ.: Ուրեմն՝ որբանոցային գործի կազմակերպման համար միանվագ 3 000 000 ռ., բացի դրանից, սկսած հոկտ.[եմբեր] ամսի 1-ից յուրաքանչյուր որբին սնունդի համար՝ 150 ռուբլի:

2. Անճարներ և աննեցուկներ. սրանց օգնությանը ենթադրվում է տալ հետևյալ ձևը. յուրաքանչյուր շնչին օրական 1 ֆ. կարտոֆիլ և 60 կ. փող, այս հաշվով ամսական կարտոֆիլի արժեքը՝ 448 750 ռ., նպաստը՝ 450 000 ռ., ընդամենը երեք ամսվա համար՝ 2 756 000 ռ.:

3. Ավերված գյուղերը նորոգելու համար - ավերված գյուղերում 1000 տուն շինելու համար տալ յուրաքանչյուրին 20 գերան և 150 ռ.: 9 000 ընտանիքի էլ տալ միայն 20 գերան. այս ճյուղի համար հարկավոր է ընդամենը 2 180 000 ռ., հաշվելով նաև գերանի արժեքը:

4. Բժշկա-սանիտարական գործի համար ամսական նախատեսվում է 130 000 ռ., հինգ ամսվա համար (սկսած օգոստոս ամսից)՝ 650 000 ռ.:

5. Չնախատեսված ծախսեր՝ ամսական 100 000 ռ.

6. Որբանոցներին ավանս՝ կես միլիոն ռ., ընդհանուր գումար՝ 13 886 000 ռ.[14]:

«Ֆինանսական կոմիսիայի կարծիքով թվերը շատ խնայողական են և ընդունելի առանց առարկության»,– ավարտելով բացատրությունները ասում է զեկուցողը: Վերջինս միաժամանակ ավելացնում է, որ որբանոցներին կես միլիոն ավանս տալու մասին վերջին կետի «գումարը մանրամասն ներկայացված չի, կոմիսիան կարծում է, որ նախահաշվի մեջ պիտի մերժել միայն այդ կետը»[15]:

Պատգամավոր Ս. Խաչատրյանը հայտնում է իր համաձայնությունը վերջին կետը մերժելու վերաբերյալ, «որովհետև նման ձևով ավանս տալ չի կարելի» և հավանություն տալով նախահաշվին՝ «կասկածում է, որ գումարները չնչին են կարիքի նկատմամբ: Ուստի առաջարկում է նախա-

[14] Նույն տեղում:

[15] Նույն տեղում:

հաշիվը վերադարձնել հանձնաժողովին՝ ավելի լավ մշակելու համար»[16]: Այստեղ միջամտում է ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանը, որը «հայտնում է, որ նախահաշիվը կազմված է գաղթականական կոմիսիայի հետ միասին: Նա սկզբում ավելի էր, ընդհանուր գումարը հասնում էր 28 միլիոն ռ.[ուբլու], սակայն կոմիսիան այն կրճատեց մոտ 14 միլիոն և ինքը համաձայնեց: Այն առաջարկությունը, թե գումարները շատ քիչ են, ճիշտ է, բայց պետք է նկատի ունենալ, որ գները հաշված են պետական գներով»[17]:

Ապա նա փորձելով օգտագործել իր հեղինակությունը, խնդրում է «վերջին կետը՝ կես միլիոն ավանսի մասին, չմերժել, որովհետև դա պարտքերը վճարելու համար է և կվճարվի հետևյալ ձևով. չարաշահություններից խուսափելու համար ես կվերցնեմ գաղթ[ականական] մարմիններից նրանց պարտքերի ցուցակը ու կվճարեմ: Եթե մերժեք այդ կետը, պարտքեր ունեցողները, որոնք ընդհանրապես հին որբանոցներն են, կծախեն իրենց մթերքները»[18]:

Պատգամավոր Ս. Մամիկոնյանն իր անհամաձայնությունն է հայտնում ներքին գործերի նախարարի «առաջարկած ձևի հետ՝ պարտքերը վճարելու համար» և ավելորդ է համարում նախահաշվի բժշկասանիտարական մասը, «որովհետև հիվանդանոցները միևնույն պետք է լինեն և բնիկի, և գաղթականի համար»[19]: Նույնպիսի մոտեցում է ցուցաբերում պատգամավոր Ավդալբեկյանը: Այստեղ նորից միջամտում է ներքին գործերի նախարարը, հայտնելով, «որ գաղթ[ականական] մարմինների լիկվիդացիան կատարելու համար անհրաժեշտ է կես միլիոնը, այլապես գործը կձգձգվի ու պետական դանձարանը կտուժի, իսկ ինչ վերաբերում է բժշկասանիտարական մասին, ապա ինքը համաձայն էր, բայց բժշկա-սանիտարական կոմիսիան անհրաժեշտ գտավ առանձին պահել»: Դրանից հետո պատգամավոր Հ. Տեր-Հակոբյանը, համաձայնելով կես միլիոն ավանսը տրամարելու հետ, առաջարկում է կոմպրոմիսային տարբերակ՝ «հանել այս նախահաշվից ու ներկայացնել առանձին»[20]: Այդ առաջարկության հետ ներքին գործերի նախարարը համաձայնում է: Այնուհետև ձայների մեծամասնությամբ նախահաշիվը՝ առանց կես միլիոն ավանսի և բժշկասանիտարական մասի, հաստատվում է[21]:

Գաղթականական պետական քաղաքականությունն իր ամբողջական ձևակերպումն է ստանում վերը նշված երեք օրենքների և նախահաշվի ընդունումով:

Ինչպես տեսնում ենք, գաղթականության նկատմամբ պետական քաղաքականության օրենսդրական ձևակերպումը բավականին երկար երկու ամսից ավել ժամանակահատված տևեց և գաղթականական օրենքներն ու նախահաշիվն ընդունվեցին՝ հաղթահարելով լուրջ խոչընդոտներ: Միայն

---

16 Նույն տեղում:
17 Նույն տեղում:
18 Նույն տեղում:
19 Նույն տեղում:
20 Նույն տեղում:
21 Նույն տեղում:

ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանի անմիջական մասնակցությամբ կարելի եղավ այդ խոչընդոտները հաղթահարել: Սակայն, չնայած նախարարի վայելած մեծ հեղինակությանը, նա այնուամենայնիվ չկարողացավ հասնել Հայաստանի Խորհրդի կողմից հին գաղթականական մարմինների լիկվիդացիայի համար կես միլիոն ավանսի մասին կետի հաստատմանը: Գաղթականական օրենքների ու նախահաշվի ընդունման ձգձգումը ներքաղաքական կյանքի մի քանի այլ հանգամանքների հետ մեկտեղ, մեր կարծիքով, նաև կապված էր մի կողմից որոշ պատգամավորների մոտ օրինաստեղծ աշխատանքի փորձի բացակայության, մյուս կողմից՝ գաղթականության ծով կարիքի և պետության սուղ միջոցների պայմաններում փախստականության հետ կապված և լուծում պահանջող խնդիրների դժվարության հետ:

Վերը նշված քննարկման սղագրությունը պատկերացում է տալիս, թե հանրապետության իշխանությունների կողմից ինչպիսի համամասնությամբ է կատարվում ունևոր, աշխատունակ և պետության աջակցության կարիքը ունեցող գաղթականների տարանջատումը: Նրանք դիտարկում են գաղթականների երեք սոցիալական խումբ: Առաջինը սեփական միջոցներ ունեցող գաղթականներն են, երկրորդը՝ սեփական աշխատանքով իրենց գոյությունը պահպանելու հնարավորություն ունեցողները, երրորդը՝ առանց պետական օգնության իրենց գոյությունը պահպանելու հնարավորություն չունեցողները: Հասկանալի է, որ առաջինները՝ մոտ 110 000 գաղթական, պետության սոցիալական քաղաքականության տեսադաշտից դուրս էին թողնվում: Երկրորդ կատեգորիայի 62 500 գաղթականների նկատմամբ պետությունն իր վրա նույնպես ոչ մի պարտավորություն չէր վերցնում: Մնում էին այս կամ այն չափով պետական աջակցության կարիքն ունեցող 157 500 գաղթականներ: Սա է սղագրության մեջ նշված «մնացած մասը»: Դրանից հետո տրվում է կարիք ունեցող գաղթականների այն մասի «պատկերը», որը կազմում է 62 000 մարդ:

Հարց է ծագում, թե որտե՞ղ մնացին 95 500 գաղթականները: Մեր կարծիքով այստեղ պարզապես տեղի է ունեցել խորհրդարանական լրագրողի սղագրական սխալ: Վերջինիս կողմից գրած «և ունի հետևյալ պատկերը» բառակապակցության փոխարեն պետք է լիներ «որից» բառը: Սղագրական սխալի փաստը հաստատվում է նաև մեկ այլ ակնհայտ սխալի առկայությամբ՝ խորհրդարանական լրագրողը վերևում տալիս է 10 000 որբերի սպահպանության և 5 000 նոր որբերի համար որբանոց հիմնելու ու նրանց հագուստով ապահովելու վերաբերյալ որբանոցների նախահաշվի մասին ֆինանսական հանձնաժողովի կողմից զեկուցողի պարզաբանումները[22], և միաժամանակ նշում է միայն 10 000 որբերի թվաքանակը: Այսպիսով, գումարելով 5 000 նոր որբերի թիվը, կստանանք 67 հազար մարդ: Մնում են պետության աջակցության կարիք ունեցող 92 500 գաղթականներ, որոնց, ըստ երևույթին, օգնություն պետք է տրվեր աշխատանքի միջոցով՝ պետական ազատ, լքված և անտեր հողերի վրա, կամ էլ արհեստանոցներում:

---

[22] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), էջ 11-12:

Պետական ազատ, լքված և անտեր հողերի վրա գաղթականներին տեղավորելու խնդրի լուծումը դրված էր ներքին գործերի նախարարության վրա: Հայաստանի Հանրապետությունում առաջին կառավարության ձևավորման օրից գաղթականական գործերը վարում էր ներքին գործերի նախարարությունը Ա. Մանուկյանի ղեկավարությամբ[23]: Ներքին գործերի նախարարությունում, որպես կառուցվածքային ստորաբաժանում, ստեղծվել էր գաղթականական բաժին: Հայաստանի Հանրապետության կառավարության գաղթականությանը վերաբերող ծրագրային հիմնադրույթն իրագործելու նպատակով գաղթականական բաժնում ստեղծվում է տեղավորման բաժանմունք: Ներքին գործերի նախարարի 1918 թ. սեպտեմբերի 5-ի կարգադրությամբ արևմտահայ գործիչ, Հայ հեղափոխական դաշնակցության անդամ Վահագն Քրմոյանը նշանակվում է «ներքին գործոց մինիստրության գաղթականական բաժնի տեղավորման բաժանմունքի կառավարիչ»[24]:

Պետական ազատ հողերը պետական կալվածքների տեսքով հանրապետությունը ժառանգել էր նախկին իշխանություններից, իսկ լքված և անտեր հողերը հանրապետությունում գոյացել էին հիմնականում 1918 թ. մի կողմից Երևանի նահանգում տեղի ունեցած ազգամիջյան կռիվների[25], մյուս կողմից թուրքական ագրեսիայի արդյունքում: Լքված և անտեր հողերի առաջացման գործընթացը շարունակվեց նաև հանրապետության գոյության տարիներին: Սակայն հարյուրավոր ու հազարավոր մարդիկ լքում էին հանրապետությունը հատկապես նրա գոյության առաջին ամիսներին, ոչ միայն վերը նշվածի պատճառով, այլ նաև երկրում ստեղծված ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դրդված: Այսպես, օրինակ, 1918 թ. սեպտեմբերի 13-ի «Կառավարության լրաբերում» տրվում է հաղորդագրություն այն մասին, որ արտաքին գործերի նախարարի դիվանի տվյալներով «օգոստոսի 7-ից մինչև օգոստոսի 28-ը Երևանից կամավոր կերպով Օսմանյան հողամասերը անցել են 1484 իսլամ գաղթականական ընտանիքներ, ընդամենը 6 641 հոգի: Այս թվի վրա չի հաշվվում այն գաղթականների թիվը, որոնք օգոստոսից առաջ են գաղթել Երևանից»[26]:

Ինչ վերաբերում է գաղթականների համար բանվորական աշխատատեղերի ստեղծմանը, ապա 1918 թ. դեկտեմբերի 20-ին նախարարների խորհուրդը լսեց խնամատարության նախարարի «գաղթականության օգնություն հասցնելու նպատակով արհեստանոցներ բանալու համար 2 681 500 [ռուբլու] վարկ բանալու մասին» զեկուցումը ու որոշեց «նախահաշիվն ու օրինագիծը ընդունել և ներկայացնել Հայաստանի Խորհրդին ի հաստատություն»[27]: 1918 թ. դեկտեմբերի 28-ի տվյալներով Երևանում գործարկվել էր կենտրոնական ջուլհակային արհեստանոցը, որտեղ 25 հաստոցնե-

---

[23] Տե՛ս Միացյալ և Անկախ Հայաստան: Պատմական քայլը, Կ. Պոլիս, 1919, էջ 49:

[24] «Կառավարության լրաբեր», 10.IX.1918:

[25] Է. Զ ո հ ր ա բ յ ա ն. Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ. Երևան, 2000:

[26] «Կառավարության լրաբեր», 1918, № 4:

[27] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ–199, ց. 1, գ. 11, թ.33:

րի վրա աշխատում էին 887 փախստականներ: Գործարկվել էին նաև Էջմիածնի 10-ը հաստոցով ջուլհակային և մուճակների, Երևանի փականագործախառատական և դարբնոցաձուլական արհեստանոցները[28]: Արդեն 1919 թ. հունվարի 25-ի տվյալներով Երևանում բացվել էին ատաղձագործական, Էջմիածնում՝ ասիական կոշիկի, Յուվայում՝ բրուտագործական, Ղամարլուում՝ դարբնոցաատաղձագործական արհեստանոցներ: Միաժամանակ խնամատարության նախարարության աշխատանքի բաժինը բանակցություններ էր վարում Երևանի «Ախթամար» մեխանիկական արհեստանոցը գնելու և Սարդարի այգում հող վարձակալելու՝ բանջարաբուծությամբ, ծաղկաբուծությամբ զբաղվելու համար[29]:

Այսպիսով, 1918 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին փախստականների նկատմամբ պետական քաղաքականությունը ստացավ իր օրենսդրական ձևակերպումը: 1915 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության օրենսդիր և դործադիր իշխանության մեջ ընդդրկված հասարակական-քաղաքական դործիչներից ոմանք փախստականների գործի կաղմակերպման բավականին փորձ էին կուտակել: Այդ առումով առանձնապես կարևոր էին Արևմտահայ 1-ին համագումարում փախստականների օգնության հարցի քննարկումները և ընդունված որոշումները: Վստահաբար կարելի է պնդել, որ այդ փորձի վրա հիմնվելով նրանք որդեգրեցին օգնությունը փախստականներին աշխատանքի ձևով իրականացնելու քաղաքականությունը: Գործի նման կաղմակերպումը մի կողմից պայմանավորված էր կառավարության ձեռքի տակ եղած սուղ միջոցներով, մյուս կողմից կապված էր դաղթականության, հատկապես արևմտահայ փախստականներին երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքից չմեկուսացնելու, այլ ընդհակառակը, նրանց դրանում ներդրավելու, ինտեգրելու անհրաժեշտության հետ: Այդ քաղաքականության որդեդրումը Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից կարելի է համարել գաղթականներին, այդ թվում հանրապետությունում ապաստանած արևմտահայ փախստականներին պետության կայացման գործընթացներին լիիրավ, անմիջական մասնակցությունն ապահովելու ուղղությամբ որոշակի նպատակային քայլերից մեկը:

ЗАКОНОДАТЕЛЬНОЕ ОФОРМЛЕНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ ПО ОТНОШЕНИЮ К БЕЖЕНЦАМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(Сентябрь — октябрь 1918 г.)

КАРЕН АЙРАПЕТЯН

Р е з ю м е

Проблема беженцев встала перед властями Республики Армения с первых дней провозглашения независимости. Была разработана специальная политика

[28] *Նույն տեղում, ֆ. Պ–199, ց. 1, գ. 22, թ.10:*
[29] *Նույն տեղում, թ.19:*

по отношению к беженцам, которая получила законодательное оформление в парламенте республики в сентябре-октябре 1918 г. В статье впервые описывается трудный процесс обсуждения проектов законов о беженцах в парламенте республики, дается анализ государственной политики Республики Армения по отношению к беженцам.

THE LEGISLATIVE FORMULATION OF THE STATE POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA ON REFUGEES
(September-October 1918)

KAREN HAYRAPETYAN

S u m m a r y

The authorities of the Republic of Armenia faced the problem of refugees from the first days of the proclamation of independence. They developed a special policy on refugees which got its legislative formulation in the parliament of the republic in September-October 1918. For the first time in the article the hard process of discussion of the draft laws on refugees in the parliament of the republic is described and the analysis of the state policy of the Republic of Armenia on refugees is given based on the adopted laws.